

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ Ա Տ Ա Ս Ի Ո Ն .

Տարւոյս անցեալ Յուլիս Արարատ ամաստեորակի մէջ տպուեց մի յօդուած « Երուսաղէմ » և Եգիպտահայոց վիճակ » վերնագրով . այդ յօդուածի մէջ Եգիպտոսի վերաբերմամբ խօսելիս՝ բարւոք էինք համարել որ այդ վիճակը նորից Երուսաղէմի թեմ դառնար , և Երուսաղէմ Եգիպտահայոց ընտրած առաջնորդի ձեռքով կառավարելով Եգիպտոսի վիճակը՝ հոգար նաև իւր կալուածոց բարւոք տնտեսութիւնը : Անյարմար էինք համարել առաջնորդական պաշտօնը աշխարհական անձին յատկացնել . խօսել էինք Երուսաղէմի պատուոց բարձման յանձնաժողովի համար : Այդ մեր յօդուածը « Մասիս » արտատպեց փոքրիկ նախաբանով և լուրջ անուանելով . իսկ պատրիարքարանը հրատարակելով պաշտօնագրերը փութաց հերքել այն կտորը , որպէս թէ մենք սխալուել էինք ասելով թէ Վսեմ : Ստեփան փաշայ առաջնորդ է նշանակուած : Մենք երբէք չենք ասել թէ Ստեփան փաշայ առաջնորդ է նշանակուած , այլ արտատպելով Մասիս լրագրի Մայիսի 9 օրաթերթի լուրը ամբողջապէս , որով յայտնվումէր թէ նորին Վսեմութեան պէտքէ յատկացուի ազգային պատուիրակի անուամբ Եգիպտոսի առաջնորդական պաշտօնը՝ ծանօթութեան մէջ յիշել էինք որ ազգային ժողովը միայն ճանաչել է Ստեփան փաշային ազգային պատուիրակ առժամանակեայ կերպով ազգային գործերի վերայ հսկելու և առաջնորդական ընտրութիւն կատարելու : (Տես Արարատ Յուլիս ամիս , երես 312 – 313) :

Այսպէս ուրեմն , քանի որ մենք գիտէինք Ստեփան փաշայի պաշտօնի ինչութիւնը և մեր յօդուածի մէջ ևս գուրս էինք բերել , ի հարկէ առնելով Տաճկաստանի լրագրներից , ուրեմն պաշտօնական թղթերի հրատարակութիւնը իմ գրուածքը հերքելու համար գրեթէ խորհուրդ չունէր , եթէ գուցէ Տաճկահայոց կարծիքը փարատելու անհրաժեշտութիւնը ի նկատի չունենար պատրիարքարանը :

Մենք խօսել էինք նորին Վսեմութեան Երուսաղէմի պատուիրակութեան համար էլ , Այդ յօդուածի հրատարակութիւնից յետոյ մենք ստացանք Երուսաղէմի նուիրակ Արժ . Մամրէ վարդապետ Մարկոսեանից մի գրութիւն՝ զոր Արշալոյս Արարատեան լրագրի մէջ հրատարակուած Եգիպտահայոց մի գրութեան հետ զետեղեցինք Արարատի Սեպտեմբեր ամաստեորակում :

Ստեփան փաշայ՝ Արշալոյս Արարատեան լրագրի հրատարակութեան դէմ նոյն լրագրում հերքում տպելուց յետոյ՝ մի երկար պատասխան

էլ մեր դէմ է գրում, որ տպուած է Մասիս լրագրի Հոկտեմբերի 7, 12, 13 և 14 օրաթերթերի մէջ:

Ստեփան փաշայի պատասխանի առաջին մասն վերաբերումէ մեր յօդուածին՝ որ քաղուածօրէն մէջ է բերում պատասխանելու համար: Այնուհետեւ խօսումէ պատրիարքական իրաւասութեան, առաջնորդների ընտրութեան, պատրիարքարանի կողմից վաւերացման և Տէրութեան հրամանագրով հաստատուելու մանրամասնութեան համար: Այս խորհրդածութիւնը եղրակացնումէ Նորին Ասեմութիւնը գրելով. « Մի՞թէ այսպէս չե՞ն խորհրդածեր և շարժեր նաև Ս. Էջմիածնի միաբանը, երբ ամենայն Հայոց կաթողիկոսութեան Աթոռոյ Գահակայն ընտրելու ժամանակ, որ սակայն այնքան սերտ առնչութիւն չունի աշխարհաւարութեան հետ, մանաւանդ ուսական աշխարհի մէջ, փոխանակ կղզիացեալ վանուց մէջ առանձնացիլոց ամենասուրբ անձն կամ ի ձերպս լերանց միայնացեալ խտակրօն ճգնաւորն որոնելու, իրենց հետադօտութիւնը կը մղին ի հեռաւոր երկիր, մինչև յափունս Առաքորի՝ կրօնական միանգամայն և արտաքին գիտութեամբ, աստուածասիրութեամբ միանգամայն և ազգասիրութեամբ փալլեալ՝ արժանաւորագոյն Հայրապետը գտնելու »:

Այս ասելով Նորին ասեմութիւնը կամենումէ հասկացնել թէ Եզիպտահայք ազատ են իրանց առաջնորդը ընտրելու: Երուսաղէմի կամ այլ տեղերի եպիսկոպոսներից, Պէտքէ այն ևս ի նկատի ունենալ՝ որ միայն Առաքորի ափունքում կողո իւրիսկոպոսները չեն օժտեալ առաքինութեամբ, և այս նորանից է յայտնի, որ Ս. Էջմիածնի միաբանութիւնն էլ առել է ազգին երջանկայիշատակ Սիմէօն, Ներսէս Ե. Հայրապետների նման ընտիր հովուապետներ:

Նախ որ մի ընդհանրական Հայրապետի ընտրութեան չի կարելի նշմանեցնել Եզիպտոսի առաջնորդի ընտրութիւնը, որովհետեւ Հայրապետը ոչ թէ մի որ և է գաւառի եպիսկոպոս է, այլ Հայաստանեայց եկեղեցւոյ գլուխ և ներկայացուցիչ: ուրեմն Հայաստանեայց եկեղեցին Հայաստանեայց եկեղեցւոյ եպիսկոպոսներից արժանաւորագոյնը պէտք է ընտրէ առանց խտրութիւն զնելու թէ այդ եպիսկոպոսը Էջմիածնի միաբան է, Տաճկաստանի մի քաղաքի առաջնորդ, Պօլսոյ մի թաղի քարոզիչ թէ Կ. Պօլսոյ Հայոց պատրիարք: միայն թէ լինի այդ եպիսկոպոսը Ս. Էջմիածնի եպիսկոպոսներից, Եթէ անխտրութիւն է, ինչո՞ւ Պօլսոյ պատրիարքարանը Դամասկոսի կամ Բերութի առաջնորդ մի Սսի կամ Աղթամարի եպիսկոպոս չէ նշանակում, և ինչո՞ւ այդ իրաւունքը վերապահուած է միայն Երուսաղէմոյ պատրիարքին, ինչպէս Սսի թեմի վիճակների իրաւունքը վերապահուած է Սսի կաթողիկոսին, Աղթամարին՝ Աղթամարայ. այս հանգամանքից երևումէ որ այդ թեմերի վիճակները իրանց թեմի եպիսկոպոսների մէջ պէտք է ընտրու-

Թիւն անհն, եւ ի՞նչ համեմատութիւն էջմիածնի ընդհանրական Հայրապետի ու Եզրիպտոսի առաջնորդի ընտրութեան մէջ:

Երուսաղէմի՝ Եզրիպտոսում ունեցած կալուածների համար Նորին Վսեմութիւնը գրումէ.

« Երգարե Երուսաղէմ մեծամեծ կալուածներ ունեցեր է ժամանակ մը յԵզրիպտոս, և անոնց հասոյթն Եզրիպտահայք մի քանի տարի իրենց սեպհականեր են, բայց 1869 ի առաջին երեք ամսոց մէջ Եսայի Սրբազան պատրիարքի ջանիւքը, Հոգեւոյս Իգնատիոս պատրիարքի պատուիրակութեամբ և Սիմէօն Սրբազան Եպիսկոպոսի և Վսեմափայլ Նուպար և Թագուոր փաշայից բանակցութեամբ Եզրիպտահայոց երեւելեաց ժողովներով վերջապէս վախճան տրուեր է կալուածական սոյն խնդրոյ իրաւախոհոհոյթեամբ, որով 14 Մարտ 1869 թուականաւ դաշնագիր մը կնքուեր է սա իմաստով. Ի դիմաց միաբանութեան սուրբ Երուսաղէմի՝ Նորին Սրբազնութիւն Եսայի պատրիարք Եզրիպտոսի ազգայնոց խնդիրը սիրով և յօժարութեամբ ընդունելով և չը զլանալով նոցա իւր մարդասիրական խնամքն՝ իւր հայրական պարտաւորութեամբը Պահիրէի մէջ գտնուած կալուածներէն էշմուն կրէսի ապատիէն (ագարակային հող) և Օթէլ տընիլ փողոցը մէկ տուն և Պէյնէլ սուրէյն Հայոց եկեղեցւոյ փողոցը ներքը սրճարանով մէկ տուն՝ Պահիրէի ազգայնոց ի նպաստ կընուիրէ և սոյն երեքէն զատ մնացեալ կալուածներն իրենց երեսուն և եօթն հեօճէթներովն (կալուածագիր) կառնու իւր տնօրէնութեան ներքեւ, և կըհաստատէ թէ սոյն կարգադրութիւն երկու կողման սիրով և յօժարութեամբ եղած է, և առ ի արգելուլ ապագային որ և է կողմանէ վէճ, պահանջողութիւն և բանակցութիւն, սոյն դաշնագիրն վաւերական կը հրատարակէ առաջի ազգային վարչութեան և ամենայն ատենից կառավարութեան », Ի միջի այլոց Նորին վսեմութիւնը գրումէ — « Այս հաշուէն դուրս է անշուշտ Ալէքսանդրիոյ կալուածներն, զոր Ալէքսանդրացիք բաւական ժամանակ ամբողջովին իրենց սեպհականներէն յետոյ վերջապէս Գերապատիւ Սիմէօն Եպիսկոպոս 1879—80ին ի դիմաց սուրբ Երուսաղէմի միաբանութեան մեծկակ կտոր մը անոնց թողլով, կարողացաւ մնացեալ մասն ճողոպրել, որ այսօր Ս. Երուսաղէմի մասնաւոր գործակալի ձեռք կը տնտեսուի և արդիւնք կը բերէ կարծեմ մինչև 4—500 ոսկի: Արդ, հարցուցէք, կ'ազաչեմ Արժանապատիւ Եղիսիկ վարդապետին թէ այս 5—600 ոսկւոյ տարեկան հասոյթով պիտի վճարէ Ս. Երուսաղէմի լեռնացեալ պարտքը, և թէ այո՛, կը շնորհաւորեմ իւր տնտեսագիտական հանճարը և ես կ'անցնիմ պատուարժան վարդապետին սխալները ուղղելու »:

Ինքն Նորին Վսեմութիւնը արդէն յայտնումէ որ Ս. Եսայի Պատրիարք իրաւախոհոհոյթեամբ Երուսաղէմի կալուածների մի մասը զիջանումէ Եզրիպտահայոց, որպէս զի վանքի իրաւասութիւնը միւս մասին վերայ կարողանայ ապահովել իսկ այդ ապահովեալ այժմ

աննախանձելի դրութեան մէջ գտնուած կալուածից ստանումէ Երուսաղէմը 15,000 շոշ. որից դուրս գալով զանազան ծախքերը, Երուսաղէմի գանձարանը մտնումէ 5,400, իսկ Գահիրէի Լայ ժողովրդեանը մնացեալ մասն էլ հետը հաշուելով՝ 12,027 շոշ. Ալէքսանդրիոյ կալուածների վերաբերութեամբ գրուած Ճողոպրել բառը արդէն ցոյց է տալիս ամեն բան, իսկ այդ Ճողոպրածի արդիւնքն է 4—500 ոսկի, նորին Վսեմութիւնը հեգնելով իմ տնտեսագիտութիւնը, շնորհաւորումէ իմ հանձարը եթէ ես կարողանամ այդ գումարով Երուսաղէմի պարտքը վճարել, Արդարեւ այդ գումարով չէ կարելի Երուսաղէմի լեռնացեալ պարտքը վճարել, սակայն այդ լեռնացեալ պարտք ունեցող Երուսաղէմի համար, որի եկամուտներն են ուխտաւորների կամաւոր նուէրքները, մեծ նշանակութիւն ունին 5—600 ոսկիները, որ բարեօր տնտեսութեամբ գուցէ կարող էին կրկնապատկուել, եթէ այդ գումարով՝ պարտուց տոկոսի $\frac{1}{4}$ էլ չի վճարուիլ, ուրեմն եթէ չըլինէր գումարը, դորա քանակութեամբ իւրաքանչիւր տարի բարդուելով՝ լեռնացեալ պարտքը և իւր տոկոսիքը աւելի կըստուարանային:

Բայց Եգիպտոսի կալուածոց մանրամասնութեան համար մէջ բերենք Ս. Երուսաղէմի նուիրակ Արժ. Մամբրէ Վարդապետ Մարկոսեանի վկայութիւնը. « Եգիպտոսի գլխաւոր ազգայինք 1845 թուին այնտեղ և յԱլէքսանդրիա գտնուած Ս. Երուսաղէմի կալուածները կը բռնաբարեն և եկամուտները կը սահմանեն իրենց դպրոցաց և Եկեղեցեաց, անանկ ժամանակ, որ կալուածներն շատ աւելի արդիւնարեր էին քան այժմ, մեք նուազ մի թիւ առնելով տարին 500 ոսկի հաշուեմք կը գտնեմք որ առ նուազն միաբանութիւնը մինչև ցարդ՝ առանց տուկոսի հաշուելու՝ զուտ արդիւնք կորուսած է 20,000 ոսկի, այն ատենէն սկսեալ միաբանութիւնը շարունակ աշխատած է այդ կալուածները ձեռք ձգելու համար ծախսեր անել և չէ յաջողած, թողումք հիները, միայն 1865 թուէն ի վեր եղածները գնեմք »:

Վ. Գ. Բ. Բ. Բ.

« Գեր Սահակ Եպիսկոպոս կը գնայ 1865—66 և ծախք կը լինի առանց օգտի 10,240
 • 1867—68. Ս. Պատրիարք հայրը կերթայ և ծախք կ'ըլինի 54,190
 • 1868—69. Գեր. Իգնատիոս Եպիսկոպոս 59,508
 • 1879—80 Գեր. Սիմէօն Եպիսկոպոս 13,219
 « Աւելացնենք սորա վերայ բռնաբարուած կալուածներէն արդիւնքը 2,000,000
 « Միայն Եգիպտոսէն 40 տարուան մէջ Աթոռը վնասած կը լինի 2,137,157
 « Եթէ հին տարիներու վնասները և զրամոց տոկոսներն ալ հաշուեմք, այն ատեն ներկայ պարտքէն շատ աւելի գումարի մը կը հասնեմք, Թէպէտ վերջապէս իրը թէ յանձնեցին, սակայն մէկ մասը,

« այն ալ աւերակ վիճակի մէջ և անշահարեր, որ դեռ միշտ նորոգու-
 « թեան կարօտ են » (Երես 43-45. Ս Երուսաղէմի Հայոց ազգային
 վանուց մասին տեղեկութիւններ. Ռոստով (Դօնի վերայ,) տպարան
 Յովհ. Տէր—Արրահամեան 1883) :

Նորին Վսեմութեան պատասխանի Ք. մասն վերաբերումէ Տաճկաս-
 տանի առաջնորդի նշանակութեանը, Նորին Վսեմութիւնը ապացու-
 ցանումէ որ աշխարհականը բնաւ երբէք կարող է առաջնորդ լինել.
 թէև առաջնորդը կէս քաղաքական հանգամանք ունի, Հէնց այդ էլ
 մեր ասածն է, որ միայն հոգեւորական անձն պէտք է առաջնորդ նշանա-
 կուի ըստ եկեղեցական և տիրող պետութեան օրինաց և ըստ սահմանա-
 դրութեան. Նորին Վսեմութիւնը վկայելով որ առաջնորդութիւնը միայն
 հոգեւորական անձին վերաբերեալ մի գործ է, պատուիրակութեան գա-
 լով ասումէ « մենք երբէք չենք յանձներ աշխարհականաց առաջնոր-
 « դական պաշտօն, բայց պատուիրակութեան մասին խտրութիւն չենք
 « ըներ ընդ եկեղեցականս և ընդ աշխարհայինս » : այսպէս շարունակ-
 կելով Նորին Վսեմութիւնը թվումէ աշխարհական և հոգեւորական պա-
 տուիրակների անունները կարծես մենք ասած լինէինք թէ աշխարհա-
 կան պատուիրակ նշանակելը մահացու մեղք է, Մեր խնդիրը աշխար-
 հական և հոգեւորական պատուիրակի անձնաւորութիւնը չէ, այլ նորա
 կատարած գործը. զօ. մենք աւելի ուրախ կըլինէինք որ Արժ. Հարց
 Վահան և Պարեգին Վարդապետների տեղ աշխարհական պատուիրակ-
 ներ ուղարկուէին Տաճկաստանի հայարնակ գաւառները, յանձնարա-
 րուած գործը զլուխ տանելու, քան հոգեւորական անձինք՝ եթէ դոքա
 չեն կարողացել ստանձնած պաշտօնը օրինաւոր կերպով կատարելու.
 Պատուիրակութիւնը մի որոշեալ յանձնարարութիւն որոշեալ ժամա-
 նակի մէջ կատարելու բոլորովին ջոկ բան է, պատուիրակի կոչմամբ ա-
 ռաջնորդական պաշտօն կատարելը ջոկ բան, 2 ենք կամենում մանրա-
 մասնել, որովհետև արդէն դոցա զանազանութիւնը յայտնի է բոլորին.

Մենք ասել էինք, եթէ առ ի չգոյէ հոգեւորական անձին պարտաւո-
 րական հարկ կայ Եզիպտահայոց գործերին յաջող և շուտափոյթ ըն-
 թացք տալու համար նշանակել մի աշխարհական պաշտօնեայ, ապա-
 քէն այդ պաշտօնեայն ըստ Տաճկահայոց սահմանադրութեան պէտք է
 ժողովրդեան ընտրութեամբ լինի. Նորին Վսեմութիւնը իւր պատաս-
 խանով յայտնումէ որ ինքն առ ժամանակեայ պատուիրակ է նշանա-
 կուել և ըստ իւր ասութեան « աստ բնակելով և իւրե տեղացի ընկա-
 « լայ պատուիրակութեան պաշտօնն՝ ձրիաբար » , եթէ այդպէս է և
 ժողովուրդը գոհ է, Նորին Վսեմութեան ձրիաբար պաշտօնավա-
 րութեան համար թիւր շնորհակալութիւն :

Նորին վսեմութիւնն իւր Երուսաղէմի պատուիրակութեան համար
 խօսելով՝ թվումէ մի կարգ պատուիրակների անուններ, որոնք է որ՝
 դրամ ստացել են և է որ՝ չեն ստացել, իւր համար ասումէ. « Ես 1879

« թուին «աստիկ լերդացաւով մ' ախտանալով պարտաւորեցայ Հրաման
 « խնդրել գնալ անցունել ձմերան եղանակն ի Պէրուժ, ուր բարեխառն
 « և միտրինակ կլիմայն կրնար ինձ օգտակար ըլլալ իբր ախտացելոյ, և
 « ներել միանգամայն աշխատելու իբրև բժիշկ. պատերազմական պաշ-
 « տօնատունն, ուր կը ծառայէի հաճեցաւ տալ ինձ Հրաման, պայմա-
 « նաւ՝ որ ծախքն ամբողջ իմ վրայ ըլլան, որպէս օրէն է նմանօրինակ
 « պարագայից մէջ, Եւ ես երբ տուն տեղ ամեն ինչ ցրուելով, ըստ ո-
 « րում արդէն որոշած էի բոլորովին հրաժարիլ պաշտօնէս և առանձ-
 « նանալ ի Սիրիայ, եթէ երկիրն յարմար էր առողջութեանս
 « և գործոցս կը պատրաստէի մեկնիլ ընտանեօք և պարագայիւք, որ-
 « ջոյն հրաժեշտի տալով գեղազուարճ ամիսնցն Վոսփորի, որ իմ ծր-
 « նունդս նախած են, գերեզմանացն, որ ծնողացս և իմ վաղամեծիկ մի
 « որդիկիս ոսկերոտիքը կը պարունակեն, ազգականացս և բարեկամաց,
 « ազգային գործոց՝ որ իմ սփոփանքս էին և կառավարական պաշտա-
 « մանս՝ որ իմ սնունդ կը մատակարէր, և ահա խնդիր ընկալայ Ս. Ե-
 « րուսաղէմի պարտուց բարձման յանձնաժողովէն՝ Ս. Երուսաղէմ եր-
 « թալ և իբր պատուիրակ անցեալը քննել, պարտուց հաշիւը ստուգել
 « և միաբանական ուխտին վարչութիւնն ապագային համար վստահելի
 « զրութեամբ բարեկարգել, Ես առաջարկեցի թէ ոչ իմ առողջական
 « վիճակ և ոչ զրամական կարողութիւնն չէին ներեր ինձ այդպիսի
 « պաշտօն մ' ընդունիլ. Վսեմ. Սերվիլէն էֆէնտի, որ Յովհաննէս
 « հանգուցեալ պատրիարքի օրով Ս. Երուսաղէմ հանդիպած է և ազ-
 « գային յանձնարարութիւն մ' ևս կատարած, իբր բժիշկ հաւաստեց
 « ինձ թէ Երուսաղէմի կլիմայն նոյն եղինակին մէջ (Նոյեմբեր ամսոյ
 « մէջ էինք) չէր մեծապէս տարբերեր Պերութեն, և յանձնախմբի միւս
 « անդամք զիւրացուցին զրամական խնդիրն՝ ըսելով թէ — «արդէն
 « խօսք եղած էր իրենց Քաղ. ժողովոյ մէջ 250 ոսկւոյ չափ ծախք մը
 « յատկացունել այս խնդրոյն, և երբ Սրբազան Նախագահն, որ մեր
 « ամենասիրելի ներսէսն էր դարձեալ, կոչումն բրաւ իմ ազգասիրական
 « զգացման և անձնասիրութեանս, թուլացայ, հաճեցայ և ընկալայ
 « պատուիրակութեան պաշտօնն, պայմանաւ որ 1. գործնական, մեկին
 « և մանրամասն հրահանգ տան պաշտօնավարութեանս, և ամեն ծախք
 « իմ վրայ ըլլալով, զրամական փոխարինութիւն մ' ընեն թէ ճանա-
 « պարհին բնելու ծախուց, և թէ ի Ս. Երուսաղէմ իմ ընկերական վի-
 « ճակիս և պաշտօնական զրութեանս յարմար անկախապէս ապրե-
 « րելու արատաւոքոր ծախուցս, և թէ ի Պերութ կամ ի Դամասկոս
 « ընելիք ուղեորութենէս զրկուելուս համար, և այն՝ 200 ոսկի, որոյ
 « 100ը կանխիկ ստանալով՝ խոստացայ միւս կէսը չընդունել՝ եթէ ա-
 « ռաջինը բաւէ, և մեկնեցայ. Եւր բառերով վերջացնումենք մեր
 « խօսքը ըստ մասին պատասխանած լինելով.

Յուսիկ Վարդապետ.